Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 684 - Ա
որոշման

«Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԹՈՒՄՈ» ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակը ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով շենքային պայմանների ստեղծումն է:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագիրն իրականացվելու է «Ջի Էյչ ԷՄ» բարեգործական հիմնադրամի կողմից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցով (240,000,000 երկու հարյուր քառասուն միլիոն դրամ), «Կողբ» հիմնադրամի կողմից (144,000,000 մեկ հարյուր քառասունչորս միլիոն դրամ) և այլ բարերարների կողմից (1,323,000,000 մեկ միլիարդ երեք հարյուր քսաներեք միլիոն դրամ) հատկացված և հատկացվելիք նվիրաբերությունների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	«Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի 1-ին փողոցի 35/1 հասցեում, քաղաքաշինության ոլորտում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 1,707,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր յոթ միլիոն) դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառուներն են Կողբի և հարակից բնակավայրերի համայնքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով 2016 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ 1. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում – 73,000,000 (յոթանասուներեք միլիոն) դրամ, 27.09.2016 թվականից մինչև 30.06.2018 թ.-ը (մինչև 2017 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է 71 205 000 դրամի գործարք), 2. Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում – 1,434,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր երեսունչորս միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը (մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում կնքվել է 674 818 531 դրամի գործարք), 3. Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում – 18,000,000 (տասնութ միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2020 թվականը, 4. Հողամասի, շենքի կամ շինության ձեռքբերում – 170,000,000 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն) դրամ, 15.09.2022 թվականից 31.12.2023 թվականը Հայաստանի Հանրապետությունում, 5. Վարչական ծախսեր - 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ 27.09.2016 թվականից մինչև 30.09.2018 թվականը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից – 10,000,000 (տաս միլիոն) դրամ, 27.09.2016 թվականից մինչև 30.06.2020 թվականը, 2. Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում արտերկրից – 63,000,000 (վաթսուներեք միլիոն) դրամ, 27.09.2016 թվականից մինչև 30.06.2020 թվականը,

		3. Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունից – 1,082,000,000 (մեկ միլիարդ ութսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը, 4. Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռքբերում արտերկրից – 352,000,000 (երեք հարյուր հիսուներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2023 թվականը, 5. Հողամասի, շենքի կամ շինության ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունում – 170,000,000 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն) դրամ, 15.09.2022 թվականից 31.12.2023 թվականը, 6. Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների ձեռքբերում Հայաստանի Հանրապետությունից – 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 31.12.2020 թվականը, 7. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում արտերկրից – 6,000,000 (վեց միլիոն) դրամ, 01.03.2017 թվականից մինչև 30.09.2020 թվականը:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 8,000,000 (ութ միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը, 2. Գործուղման ծախսեր – 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը, 3. Գրասենյակային և այլ ծախսեր – 1,000,000 (մեկ միլիոն) դրամ, 01.10.2016 թվականից մինչև 30.09.2020 թվականը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կողբի համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

28.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ